

ԺՈՂՈՎՐԴԱԽՈՍԱԿԱՑԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ ՍՈՒՐԵՆ ԱՅՎԱԶՅԱՆԻ «ՃԱԿԱՏԱԳԻՐՆ ԴԱՅՈՑ» և «ԽՆԶՈՐԵՍԿ» ՎԵՊԵՐՈՒՄ⁴¹

Սվետլանա Մանուչարյան

Բանալի բառեր՝ ժողովրդախոսակցական տարրեր, բարբառային տարբերակներ, գործածել, ժողովրդայնություն, պատկերավոր խոսք, տիպականացում, ոճավորել, արտահայտչականություն:

Հայերենի տարբեր բառաշերտերի լեզվական միջոցները հնարավորություն են տալիս գրողին բնութագրելու հերոսներին, ստեղծելու ժամանակի և միջավայրի համապատասխան կոլորիտ: Լեզվի ժողովրդախոսակցական տարրերի կիրառությունը զգալիորեն կախված է ստեղծագործության թեմատիկայից և արծարծվող նյութից:

«Ճակատագիրն հայոց» պատմավեպում պատկերված են 17-րդ դարի վերջում և 18-րդ դարի սկզբներին օսմանյան և պարսկական լծի տակ հեծող հայ ժողովրդի վիճակը, հայ մելիքների ծավալած ազգային ազատագրման փորձերը, Իսրայել Օրու, Հակոբ Ջուղայեցու և Եսայի Հասան-Ջալալյանի քաղաքական գործունեությունը: «Խնձորենկ»-ում հեղինակը անդրադարձել է 20-րդ դարի 20-30-ական թվականների Հայաստանում, մասնավորապես Գորիսում և Խնձորենկում ընթացող սոցիալ-քաղաքական փոփոխություններին:

Ժողովրդախոսակցական տարրերը բարբառներից և խոսակցական լեզվից գրական լեզվի՝ փոխառած բառաձևերն ու արտահայտություններն են, քերականական ու հնչյունական տարբեր ձևերը, դարձվածները, թևավոր խոսքերն ու առած-ասացվածքները, որոնք, օժտված լինելով հուզարտահատչական երագով, գեղարվեստական բնագրերին ժողովրդայնություն են հաղորդում:

Ս. Այվազյանի հիշյալ պատմավեպերը համեմված են Ղարաբաղի ու Գորիսի բարբառային միավորներին հատուկ ժողովրդախոսակցական բառ ու բանով: Նկարագրելով գյուղական կյանքը և գյուղացուն առանց մայրենի խոսվածքի՝ անբնական կլիներ, քանի որ ժողովրդախոսակցական տարրի տեղին կիրառմամբ են շնչավորվում, կենդանություն ստանում շինականի, պղնձագործի, դարբնի և այլոց կերպարները: Գրողի լեզվի ժողովրդայնությունը զգալի է գրական հերոսների անունների ընտրության մեջ, այսպես՝ «**Ճատունց Նահապետ, Արջանց Խատապ, Օղտանց Մուշեղ, Ծլվծալանց Փոխան**» [1], «**□որմնահյուսներ Ջուլհակենց Ալահվերդին, Դնելանց Կևին, դարբիններ և պղծագործներ Բյալանց Հայրապետն ու Արսենը, Սիրավանց Խաչին, Բագունց Սիմոնը**» [2], «**Մանգուն Մանաս**», «**Գողուն Սինաս**» (Խ., 348), «**Բութուն Աղալար**» (Խ., 349) և այլն: Նկատելի է, որ նշված անձնանունները ձևավորվել են Գորիսի խոսվածքներում գործուն սեռական հոլովածներով, ազգակցություն արտահայտող հոգնակիանիշ մասնիկներով և հնչյունական ամփոփմամբ՝ հապլոլոգիայով: Հարկ է նշել, որ առօրյա-խոսակցական ոճի իրողություններ են համարում **-իք, -այք, -երք, -ենք, -անք, -ունք, -ոնք** հոգնակերտները, որոնցով բաղադրված բառաձևերը «խոսք են բերում իրենց միջավայրին հատուկ ոճական երանգներ ժողովրդականը ժողովրդական» [3], ինչպես՝ «**□բամբասող կնամիքից չեն տարբերվում**» (Խ., 355), «**Տղերք, չխմե՞նք այս ուրախության համար**» (ԾՀ, 646), «**□քշում իրենց գյուղորայքից**» (ԾՀ, 160), «**Ուտի՛ հանել մերոնց**» (ԾՀ, 21) (ուղղ.՝ մերոնք, սեռ.՝ մերոնց) և այլն:

Խոսակցական լեզվին բնորոշ հնչյունափոխված բառաձևերը և տարբեր օտարալեզվյան փոխառությունները, իբրև տիպականացման միջոց, հանդիպում ենք հատկապես կերպարների լեզվում այն երանգավորելու, ավելի բնական ու հարուստ դարձնելու

⁴¹ Հոդվածն ընդունվել է 18.11.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Բ.Գ.Թ., դոցենտ, Լ.Ներսիսյան:

նպատակով: Այսպես «իմացավ Մեհրին, որ իրիկնանում է» (ԳՅ, 70), «□ հայացքը իրիկնացող ծորին» (Խ, 253) (**ե>ի** անցում), «□ գուննի ծենի պես» (Խ., 251), «Վայ ծեր մերը չմեռնի» (Խ, 220), «Բարի օր, այ հեք» (ԳՅ, 17), «էս կողմը կաց» (Խ, 248), «էք երբվանի՞ց է խնծորեսկն էնքան փչացել» (Խ, 161), «Փախանք էնտեղից, էստեղից» (Խ., 212), «էսօր պիտի հայտնվեն» (Խ, 86) (**այ>է** անցում), «Քսան տարվա ջաղագպան է» (Խ, 251) (**ր-ի** անկում) և այլն: **Եղբայր** (*bhráthēr)[4] բառին զուգահեռ հեղինակը գործածել է միջին դարերից ավանդված աղբայր-ի ախպեր տարբերակը, որում նկատելի է **դք>խպ** (փոխազդեցական) և **այ>ե/է** հնչյունափոխությունները («...ի՞նչ ծուխ է, ախպեր» (Խ, 49), «...ախպեր դառնանք՝ վար ամենք» (ԳՅ, 463)): Արևելյան լեզուներից թուրքերենից, պարսկերենից, արաբերենից անցած բառերից են, օր: «□ օմբաշին չրմիոցով պաշեց» (ԳՅ, 143) (տասնապետ), «□ բան են ուզում ասել զուռնաչիները» (ԳՅ, 115), «□ իսկույն ջահաննամն ուղարկել» (ԳՅ, 171), «Ջհաննամը գան» (Խ, 224) (արաբ. gehennem) [5], «□ յուլա գնացեք» (Խ, 56) (թուրք. yol) [6], «□ փեշքեշ են անում այս տարվա հարկերը» (ԳՅ, 18), «□ դու օլաղ» (Խ, 340), «□ պետք է գյուլլել» (Խ, 151), «դիմեցիք քալալագյուզուքյան» (Խ, 343), «Թող քո տերը սալավաք քաշի երեսին» (ԳՅ, 654), «...օձիքը նախշված է սև դալթանով» (Խ, 222) (տաճկ. gaytan)[7] (երիզ) և այլն, նաև ռուսերենից «...բանդիտների մոտ» (Խ, 224), «...բոլոր կոմունիստների անունները» (Խ, 161), «...նախկին կուլակի» (Խ, 271), «...բուշլիզմի դեն» (Խ, 205) «Բաքու տանող մաշինի ծուխն է» (Խ, 49), «...մի վերոջ օղի» (Խ, 163) և այլն:

«Խնծորեսկ»-ում հեղինակի լեզուն հնարավորինս մոտեցված է առօրյա-խոսակցական լեզվի արտահայտչաձևերին՝ ի տարբերություն մյուս պատմավեպի: Հիմնականում կերպարների ոճավորված խոսքի կերտմանը նպաստել են երկխոսությունն ու զրույցը, վերհուշն ու ներքին խոսքը, որոնցով հերոսները բնութագրում կամ բացահայտում են իրենք իրենց: Աշխատավոր գյուղացու, շինականի կերպարներն ավելի ամբողջական պատկերելու և անհատականացնելու միտումով Ս. Ալվազյանը մեջբերել է Գորիսի խոսվածքներով գրառված հորովել, որը երգում են հոտաղներն ու «սոված Ալին»՝ «□ վա՛ր ամենք, ամեն մարդու հագար ցավ, գոնե մեկին ճար ամենք» (ԳՅ, 463), կամ «Հո՛ւրա, հո՛ւ, ապան մատաղ, Ապուն դալու կուճոր հոտաղ» (Խ, 248): Հարկ է նշել, որ այս վերջինս ընդհանրապես տարածված է Ղարաբաղի բարբառում:

Ժողովրդախոսակցական բառաշերտի յուրաքանչյուր իրողության տեղին օգտագործումն արտացոլում ու ընդգծում է բարբառախոս հերոսի հոգեբանությունն ու մտածելակերպը: Բնագրերի լեզվին ժողովրդայնությունն են հաղորդում ժողովրդական բառընկալմամբ ձևավորված այն բարդությունները, որոնց առանձին բաղադրիչները գրական են, իսկ ամբողջական կազմությամբ՝ խոսակցական, ինչպես «Շնչահան արեք մեր օջախը մտած թշնամուն» (ԳՅ, 92), «...որոնց շվաքում ճաշթող էին անում» (ԳՅ, 34), «Ինձ այդ կնիկը դուր է եկել» (ԳՅ, 530), «...հետո էլ հավան չկենալ» (Խ, 344), «Ինչո՞ւ հիմա ինձ է նեղը լծել» (ԳՅ, 672), «Դեմ են անում ուսը ուսի և հրում» (ԳՅ, 291), «Դե շաղ եկեք և գործի կացեք» (ԳՅ, 10), «Այդ դեպքում ետ կազ քո վճռից» (ԳՅ, 31), «Մեհրին մեջտեղ չընկնեք» (ԳՅ, 16), «□ աղ ու հացը հարամ են համարում» (ԳՅ, 261), «եթե շուն շան որդի Մելիք-Ֆարամազյան Մեհրին մեջտեղ չընկներ» (ԳՅ, 16), «էհգար, մի իմացիք, տես երկնաշին տերը ինչո՞վ է սնվում» (Խ, 131) և այլն, որոնցում **ետ կաց**-ը ունի հրաժարվել, **մի իմացիք** կառույցը տեղեկացիր, **ճաշթող անել**-ը՝ հանգստանալ իմաստները և այլն: Հետաքրքրական են նույն երևույթի տարբեր անվանումով բարդությունները, օր: «լուսաբաց՝ հավախոս, աքաղաղական՝ «...քե՛ք են անում մինչև հավախոս» (ԳՅ, 156), «Վերջին աքաղաղականից հետո» (Խ, 128) և այլն: Առանձնացրել ենք նաև ժողովրդական խոսքի արտասանական երանգով տարբեր խոսքիմասային իրողություններ, որոնք հեղինակը կրկին նախընտրել է օգտագործել գրական համարժեք ձևերի փոխարեն. գոյականով «Արամ, հե՛յ, բալաս» (Խ, 53) «Ինչպե՞ս եք, Մեջքկոտրողանց խալխ» (ԳՅ, 72), «Ա հեք, հիմա իմ խոսքը նա է» (ԳՅ, 18), «□ իր պիղծ ոտքով քացի տվեց» (ԳՅ, 21), «Կնանոց

միացնեն, չմիացնեն մեկ է» (Խ, 161), «...չպպացնում է պռոշները» (Խ, 266), «...փախար շենից» (Խ, 62), «...անտեր-անտիրական խոխան» (Խ, 416), «...գաքանի գախ բերելու» (Խ, 239), ածականով «...մանրախոտուծ մորթուց դիք գոպ էր» (ԵՅ, 188), «Մնացածները տկլոր չքավորներ են» (Խ, 162), «...երկու թամ-թազա պատկերի» (Խ, 157), «Ապուն դալու կուճոր հոտաղ» (Խ, 248), «...ո՞վ ես, քնձռոտ» (Խ, 372), «Մենք հալալ մարդիկ ենք» (Խ, 221), «□ Կափու դաշտու խամ հող» (Խ, 120), դերանունով «Էդ ինչ պատահեց, է՛, էդտեղ» (Խ, 23), «Ոտի՛ հանել մերոնց» (ԵՅ, 751), բայով «...մի մարդ քաշանա» (Խ, 13), «...լաց եղավ պատանու պես քոսխոտելով» (ԵՅ, 244), «Էս էլ ասենք պոծները» (Խ, 268), «...հուզումից լալկվում» (Խ, 309), «Նա ձեռքերը ծեփում է աչքին» (Խ, 39), «Խնձորեսկից չենք քոչելու» (Խ, 345), «□ անարդարներին էլ պետք է գլուլել» (Խ, 151), շարկապով «...լավանում է, համա մի քիչ փողի կարիք ունեն» (Խ, 152), մակբայով «Եվ գոռով պիտի տանես ու բրիչակ թողնես տունս» (Խ, 276), ծայնարկությամբ՝ «-Ամա՛ն, շանսատակ չանեք շանը» (ԵՅ, 21): Մեկ այլ դեպքում հերոսներից մեկի պատասխանը հնչում է ամբողջությամբ վերաբերականով «Զէ՛ մի չէ՛» (Խ, 291) և այլն:

Հեղինակը կիրառել է նաև վաղակատար դերբայի բարբառային ձևեր՝ **եկալ, իլալ**՝ «մարդ ա եկալ» (Խ, 13), «□ միմակ ա իլալ» (Խ, 248). (վերջինս ձևավորվել է լինել բայի՝ Ղարաբաղի բարբառի համար ընդհանուր **ընիլ** [9], Գորիսի խոսվածքների **ինել/իլել** [10] ձևերից): Կարծում ենք, որ խոսակցական և բարբառային վերոբերյալ տարբերակների փոխարինումը գրականով չի ունենա այդօրինակ հնչողությունը և պատկերավորման սեղմությունը:

Վերաշարադրելով հերոսների ասելիքը՝ հեղինակը, բնականաբար, արտահայտում է իր վերաբերմունքը նույնպես: Ստացական հողի գործածությունը ոչ միայն ընդգծում է հեղինակի վերաբերմունքը տվյալ իրողության նկատմամբ, այլև գեղարվեստական պատկերը դարձնում է ազդեցիկ բազմակողմանիորեն ներկայացնելով հերոսների ապրումները [11], օր.՝ «Տղեք, ձեզ մատաղ, **թափներդ չկոտրեք**» (ԵՅ, 91), «**Շենքիդ, շնորհքիդ մեռնի** հորաբույրդ» (ԵՅ, 634), «Միջին Ասիան **մտքներիցդ հանեք**» (Խ, 206) «□ **գլխովս** պատր պիտի փուլ ածեն» (ԵՅ, 646), «բարի մեծը **գլխովդ** կտա» (ԵՅ, 108), «□ **կախվել է փեշիցս**» (Խ, 144), «Դու **աչքովդ** տեսա՞ր» (Խ, 224), «□ **սրտովդ** չիմենք մենք էլ» (Խ, 264), «Գնամ **Ալկները տալոջս** տունը» (Խ, 264): Ինչպես նշում է Պ. Պողոսյանը, ընդհանրապես ժողովրդական արտահայտչաձև է ուղիղ և թեք հոլովաձևերով դրված գոյականների՝ ստացական և ցուցական հոդերով գործածելը, ինչը ևս խոսքը դարձնում է հասարակ և ցածր [12]: Հոդավորման երևույթը առկա է նաև Սյունիք-Արցախ տարածաշրջանի խոսվածքների ստացական դերանուններում իմը, քոնը, մերը, օր.՝ «...հեչ անեն **իմն ու քոնը**» (Խ, 94), «Այսինքն **իմը, քոնը** չի լինելու» (Խ, 161), «...ջաղացն **իմն չիմի**» (Խ, 219), «Ո՛չ մեր հողն է **մերը**» (ԵՅ, 634): «Գրական լեզվի նորմայից նման շեղումները կատարվում են խոսքին ժողովրդայնություն, թարմություն հաղորդելու, ինչպես նաև գեղարվեստական ստեղծագործության հերոսներին, դեպքերը, հանգամանքները, միջավայրը տիպականացնելու համար» [13]: Անհրաժեշտ են համարում կարևորել այն, որ խոսակցական լեզուն կայուն չէ և փոփոխվում ժամանակի հոլովությամբ՝ տվյալ հանույթի հասարակական կյանքին զուգահեռ, ուստի հաճախ խոսակցականին հատկանշական իրողությունները մուտք են գործում գրական լեզու: Նմանատիպ լեզվական առանձնահատկություն ունեն հարադրությունները, որոնք առավել ճշտորեն ու սեղմ են պատկերում ժողովրդական մտածողությունը: Խնդրո առարկա բնագրային լեզվանյութում զգալի կշիռ ունեն անվանական և բայական հարադրությունները: Այսպես՝ ինքնատիպ են իմաստային որոշակի բեռնվածքով այնօրինակ հարադրությունները, որոնք արտահայտում են՝ հոմանիշություն «Երկարատև երաշտից հետո **թոն-թագ** աշուն էր» (ԵՅ, 5), «□ այդ աշխարհներ մեռած-պոծած են» (Խ, 121), «**Էզուզ-էլոր** դատարանի միտ է» (Խ, 124), «□ երկիրը **շիլա-փլավ կղառն**» (Խ, 245) հականիշություն «□ պիտի մի քիչ էլ **տակից-գլխից** խոսի» (Խ, 124), «**Դեսից-դենից** դուրս տվինք, բավական է» (Խ, 74) և այլն:

Ընդհանրապես ժողովրդախոսակցական տարրերով բառակրկնությունները, հաղորդված մասնա մասնի հնչյունափոխված տարրերակից, ոճականորեն ակտիվ կառուցներ են, որոնք հանդես են գալիս տարբեր գործառնություններով, ինչպես ստորոգյալի «Կա-չկա մա որոշել է» (Խ, 281), որոշչի «Հայաստան աշխարհում երաշտից ճաք-ճաք հողեր» (ԳՅ, 5), «Պարաս-սարաս դաշնակցականություն» (Խ, 303), ձևի պարագայի «Մենք շնորհի մեռնել ենք ուզում» (ԳՅ, 9), «Էսպես ու էսպես եղավ» (Խ, 63), «Ապաքինվում են, կամաց-կամաց» (ԳՅ, 632), «□ շատ մեծ-մեծ ես բրդում» (Խ, 344), «□ կամաց-կամաց մերվում են» (Խ, 6), «□ և հում-հում կուտի մրա անփորձ որդուն» (ԳՅ, 130), «Նրանք մատել էին առոք-փառոք□» (ԳՅ, 17), ուղիղ խմորի «□խլում էր մրանց եղած-չեղածն» (ԳՅ, 63) և այլն: Նշված որոշ օրինակներում հարադրությունների բաղադրիչները առանձին կիրառական են մասն գրական լեզվում, բայց դրանց կրկնությունը քննվող պատմավեպերի լեզվանյութին ժողովրդախոսակցական երանգ է հաղորդում: Ուշագրավ է մասնային, որ հարադրությունների փոխարինումը համադրականով չի ունենա մասն արտահայտչականությունը, ինչպես «Մենք հիմա փշուր-փշուր եղած ժողովուրդ ենք» (ԳՅ, 22)-Մենք հիմա մասնատված ժողովուրդ ենք, «Չախից մի կաթիլ ընկավ մորուքի վրա ու գլոր-գլոր մտավ խորքը» (ԳՅ, 21)- գլորվելով մտավ խորքը, «□խեղձ-խեղձ ասում է» (Խ, 344)-անհամարձակ ասում է և այլն: Կրկնավոր բարդություններն առհասարակ ընդգծում և խտացնում են հեղինակի կամ հերոսների վերաբերմունքը, և դրանցով հարուստ բնագրերը ունեն «ժողովրդական խոսքին հատուկ ոճական երանգները (թեթևություն, պարզություն, ժողովրդական ոգի)» [8]: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ մեր կողմից քննվող բնագրերի լեզվանյութում զգալի կշիռ են կազմում կրկնավոր բարդությունները, որոնք, ըստ բաղադրիչների ձևաբանական պատկանելության, կարելի է դիտարկել հետևյալ հարադրությունների՝ **գոյականով**՝ «...Հայաստանը կմնար Հայաստան և այսպես պատահա-պատահ չէին անի» (ԳՅ,132), «...այնքան զազանն ավելի էր խտուտ-խտուտ գալով կպնում գետնին» (ԳՅ,308), «Մայանչ-մայանչ շուռ էր գալիս սև, հայրենաբույր հողը» (ԳՅ, 526), «...քույա-քույա անտառներ՝ կապտականաչ բացատներով» (ԳՅ, 531), **թվականով**՝ «...Վարդանին ու Մամիկոնին տվեց մի-մի ոսկե ժամացույց□» (ԳՅ, 515), «...հազար-հազար տարվա Սթնածորի ամենեղություն» (ԳՅ, 80), **դերանունով**՝ «...հաստատելու համար, թե ձեր կրոնը ինչ-ինչ է» (ԳՅ, 652), **բայարմատով**՝ «...ու գլոր-գլոր մտավ խորքը» (ԳՅ, 21), «...հատակի վրա բաժան -բաժան լինելով հասել էր խաչին» (ԳՅ, 21), **մակբայով**՝ «Գլբաշներն անհույս ետ-ետ գնացին» (ԳՅ, 89)□

Ժողովրդական լեզվամտածողությանը համապատասխան գրողը յուրահատուկ արտահայտչաձևեր է գործածում, որոնք իրենց դրսևորումն ունեն խոսակցական լեզվին բնորոշ հարադիր բայերով և դարձվածքներով, օր.՝ «Նա վրայից այլուրը **թափ** չի տվել» (Խ, 256), «□այդպես մնում է երեսը **շուռ տված ետ**» (ԳՅ, 15), «□իր պիղծ ոտքով **քազի տվեց**» (ԳՅ, 21), «**Դարդ չանես**» (Խ, 283), «Էսօր չիմանան, եզուց **իմաց կտանք**» (Խ, 282), «□**պեծինն տվող** արևի տակ կատաղել էին» (ԳՅ, 33), «□իսկ ես **աչք ածեմ**, տեսնեն» (ԳՅ,71), «□որ ուտեն վերջացնեն, **ճանաչ արա** հարևաններին» (ԳՅ, 72), «□մի օրդու կարելի է **քարկոծ անել**» (ԳՅ, 73), «□հայրդ հորս **խոսք է տվել**» (ԳՅ, 107), «□որ **հուփ բերեն** ու ծգմեն մեզ» (ԳՅ, 120), «□ և **կապտին տվող** քողի տակիցիրենց գոյմներով վառվում էին□» (ԳՅ, 156), «Բայց միևնույն է, երկու անգամ **ծլունգ լինելով** պիտի տեղը փոխի» (ԳՅ, 544), «□կայծեր են **գրիվ գալիս**» (Խ, 222), «□հիմա ես **բեզ նշանց կտամ**» (Խ, 355), «...կարող էր **վրա պրծնել**□ » (ԳՅ, 21) և այլն: Բնագրերում առկա ժողովրդախոսակցական բնույթի հարադիր բայերի մի մասը, իբրև դարձվածային միավոր, քննել ենք դարձվածքների կազմում: Ս. Այվազյանը ևս, ինչպես մեր գրողներից շատերը, իր պատմավեպերում առատորեն կիրառել է դարձվածքներ, որոնց «բաղադրիչները միասնաբար մի նոր փոխաբերական-այլաբերական իմաստ են արտահայտում» [14]: Դարձվածքներն և դարձվածային միավորները, բնութագրելով ազգային լեզվամտածողությունը, իմաստալից են երանգ են հաղորդում խոսքին դարձնելով այն ավելի սեղմ և պատկերավոր: Ինչպես վկայում է Խ. Բաղիկյանը, «Լինելով խոսքը ոճավորելու անփոխարինելի միջոցներ

դարձվածները այդ լեզուն կրող ժողովրդի հոգևոր մշակույթի հարստությունն են: Ամենից շատ դարձվածքներում են արտացոլվում տվյալ ժողովրդի լեզվի ինքնատիպությունն ու յուրօրինակությունը, ազգային մտածողությունն ու հոգեբանությունը»[15]: Հավելենք նաև, որ «դարձվածքները այնպիսի լեզվական միավորներ են, որոնց իմաստներն անպայման պայմանավորվում ու պատճառաբանվում են նրանց բաղադրիչների ընդհանուր բովանդակությամբ կամ նշանակությամբ»[16]: Բնագրային նմանքնույթ օրինակներից են «...տղաս գարնանը այք է դրել» (Խ, 340) «հավանել» [17], «...նրա այքը պիտի հանեն» (Խ, 39) «1. վնասել, 2. պատժել», «թեքեց գլուխը և այքի պոչով ետ նայեց» (Ծ, 217) «աննկատելի, գաղտագողի», «այքիս վրա» (Խ, 340) «ամենայն հոժարությամբ», «թույլ չի տա արևի տակ ման գաս» (Ծ, 65) «ապրել» (ընդգծումները մերն են Ս. Մ.), «մեզ բանի տեղ չորեք» (Խ, 22) «գնահատել», «այն ծանապարհորդներից չեմ, որ բերան է շուռ ածում» (Ծ, 632) «1. ուտելու պահանջ զգալ, 2. ուրիշների հյուրասիրությունից օգտվել», «որ նա բերան բաց անի, սկսեմ» (Ծ, 17) «1. խոսել, 2. առարկել», «եկել եմ քոյորի բերանից ասեմ» (Ծ, 21) «քոյորի կողմից հանդես գալ», «Բագրատն է նրա բերանից գողագել ծամոնը» (Խ, 281) «բամբասանքի առարկա դարձնել», «նույն բռունցքը քափ տվեց աստծու վրա» (Ծ, 48) «սպառնալ», «մարդը գլուխը վերցնի պատուր տա» (Ծ, 22) «ապարդյուն չարչարվել», «գործը գլուխը բերելուց հետո» (Խ, 169) «իրագործել, հաջողացնել», «թե չէ գլխիդ օլին կբերեմ» (Խ, 285) «1. դժբախտություն պատճառել, 2. փորձանք բերել», «թե՞ քոզ են փչում» (Խ, 264) «ստել, կեղծել», «հետո լեզու են առնում» (Խ, 128) «1. խոսել սկսել, 2. հանդգնել», «թշմամու հետ լեզու գտնելով ապրենք» (Ծ, 259) «համաձայնության գալ», «մեկը ժողովրդի լեզուն կտրում է» (Խ, 17) «լռեցնել, զսպել», «խանի խոսքը գետնով տալ» (Ծ, 58) «մերժել, արհամարհել», «նրան ծնկի բերեմ քո առաջ» (Ծ, 16) «ընկճել, հնազանդեցնել», «Մեղք չէ բարձր փոխելը» (Խ, 355) «զավակ ունենալու նպատակով ուրիշի հետ կենակցելը», «...եթե նա ծուռ այքով նայելու լինի Սելիք- Ֆարամազյան տոհմին» (Ծ, 36) «1. թշնամաբար վերաբերվել, 2. հետին նպատակ ունենալ», «նրա կյանքին սև կապեմ» (Ծ, 654) «սպանել», «Կինը հալալ կաթնակեր լինի» (Ծ, 96) «առաքինի, օրինավոր», «ինչպե՞ս հողի տակ դրիր Սելիք-Ֆարամազյան տոհմի պատիվը» (Ծ, 56) «անպատվել», «հոնքերն իրար բերած սպասում էր» (Ծ, 17) «մռայվել», «խանին ասեմ մեր շենագիների խոսքը և գլուխս դնեմ նրա կացի տակ» (Ծ, 17) «կյանքը վտանգել», «...ո՞վ եք, ի՞նչ եք, ծեն հանք» (Ծ, 32) «1. խոսել, 2. աղմկել», «...ծենդ փորոզ գցել, շնաթակ են տվել» (Ծ, 90) «1. լռեցնել, զսպել, 2. սսկվել», «...մի կերպ եմ պրծել նրանց ձեռքից» (Ծ, 15) «հազիվ փրկվել», «հանում մի կտոր հացի յուրա զնագեք» (Խ, 56), «...դեռ մի կերպ յուրա ենք գնում» (Ծ, 258) «հարմարվել, համակերպվել», «հոխորտում է նեղն ընկած հայր» (Ծ, 160) «նեղվել, վտանգվել», «հենց նրա զենքով շունչն առնում» (Ծ, 179) «սպանել», «ու մարդկանց ոտի չհաներ» (Ծ, 16) «ենթարկվել, հնազանդվել», «Քո ոտի տակի հողն են, խան» (Ծ, 16) «ենթակա, հնազանդ», «իսկույն ջահաննամն ուղարկել» (Ծ, 171) «սպանել», «Ռեխդ գրիվ չտաս» (Ծ, 63) «հայհոյել», «քեխր տեսնել» (Խ, 281) «հանդիպել, տեսնել», «լուռ առել էին իրար սրտեր» (Ծ, 154) «հավանել», «էլ ո՞ւմ փեշից պիտի բռնենք» (Խ, 83) «ապավինել, օգնություն խնդրել», «ի՞նչ եք քքներդ կախ արել» (Ծ, 36) «տխրել, խոժոռվել», «Քամի արա, Ջին, մեր ցավերը և քո փչոցները» (Խ, 125) «1. ստել, 2. հեռանալ», «...մենք գարնանացանին ձեռքներս չենք ծալել» (Խ, 264) «պարապ լինել, հանգստանալ», «...էդ ում վրա եք ձեր լեղին թափում» (Խ, 342) «բարկանալ», «- էդ ի՞նչ ես դուրս տվել» (Խ, 57) «ցնդաբանել» և այլն: Նշված դարձվածքները կազմված են և՛ մարմնի մասերի, և՛ այն իրողությունների անվանումներից, որոնք նկարագրում են մարդու գործունեությունը, առօրյան ու կենցաղը, վերաբերմունքն ու ապրումները, քանի որ դարձվածքները, լինելով ժողովրդական լեզվամտածողության տարրեր, «...առաջ են եկել ու ձևավորվել այնպիսի արտահայտչական-ոճական միջոցների

գործադրմամբ, ինչպիսիք են փոխաբերությունը, համեմատությունը, շրջասությունը, չափազանցումը» [18]: Հետևաբար դարձվածքները ոճականորեն երանգավորված, ակտիվ միավորներ են, որոնց բովանդակության էական մասը նրանց ոճական-արտահայտչական կողմն է [19]: Իբրև դարձվածային միավոր՝ քննել ենք նաև այն առած-ասացվածքները, օրինանքները, եղանակավորող նշանակություն ունեցող միավորները, որոնք առնչվում են հիմնականում ժողովրդի տվյալ հատվածի առօրյան նկարագրող երևույթներին, և կիրառվելով մասնավորապես կերպարների խոսքում բնութագրում են գրական հերոսներին, ի ցույց դնում նրանց վերաբերմունքը, երբեմն էլ ընթերցողի հետ անպաճույճ հաղորդակցման ոճական հնարանք են: Դրանց միջոցով հեղինակը ներկայացրել է խոսակցական լեզվին բնորոշ երևույթները. խրատ, հորդոր. «Հացդ ցամաք կեր. բայց հոգիդ պահիր արդար» (Խ, 5), «Կաթ-կաթ ջուրը քար է ծակում» (Ծ, 335), «Կեղտը ձյունի տակ երկար չի մնում» (Խ, 167), «Բախտիդ քացի մի տուր» (Խ, 272), «Օրը ցերեկով հարյուր աչք վրեղ» (Խ, 264), «□ և «հոփ» չեն ասի, դեռ չթռած մյուս ասի» (Ծ, 384) գարնանը՝ «Բուրաստանը չիմացած բանը բերանից հանի» (Խ, 280), հիացմունք՝ «Շենքիդ, շնորհքիդ մեռնի հորաքույրդ» (Ծ, 634) և այլն: Այսօրինակ իրողություններից հետաքրքրական են օրինանք, պաղատանք արտահայտող դարձվածքները [20], ինչպես՝ «Գլխիդ մատաղ» (Ծ, 16), «Արևիդ մատաղ, խան» (Ծ, 17), «Կյանքդ երկար լինի» (Խ, 340), «□ գլխովդ շուռ գամ» (Խ, 340), «...աչքիս վրա» (Խ, 340), «Քո ոտի տակի հողն եմ, խան» (Ծ, 16): Դարձվածքներով գրողը արտահայտել է նաև խոսողի հեզմական վերաբերմունքը, օր.՝ «Բախտիդ քացի մի տուր» (Խ, 272), «□ իր հարստությունից մի մազ չպակսի» (Խ, 160), «□ մենք կորչող պտուղ չենք» (Խ, 95), «□ պոչ կխաղացնեին մեր առաջ» (Ծ, 132), հանդիմանանքը՝ «Հեր օրինած» (Խ, 19), «□ թափներդ չկտորեք» (Ծ, 91) «չթուլանալ», «Վայ ձեր մերը չմեռնի» (Խ, 220), «□ շուն շան որդի Մելիք-Ֆարամազյան Մեհրին» և այլն:

Ս. Այվազյանի լեզվարվեստի ոճական քննության տեսանկյունից յուրօրինակ պատկեր են ներկայացնում ժողովրդախոսակցական բառաշերտի տարրերով փոխաբերությունները, որոնք «հարազատորեն են արտացոլում ժողովրդական մտածողությունը, մեծապես նպաստում են խոսքի ժողովրդայնությանը» [21]: Դրանց մեջ զգալի տեղ են զբաղեցնում դարձվածքները, որոնք հետաքրքիր է ներկայացնել ըստ փոխաբերական նշանակությամբ հանդես եկող սովորական բառերի, որոնցից բնագրերում հանդիպել ենք **1. կենդանիների անվանումներ արտահայտող**՝ «□ շուն շան որդի Մելիք-Ֆարամազյան Մեհրին» (Ծ, 16) «1. անիրավ, 2. նենգ», **2. կենդանիներին բնորոշ հատկությունների անվանումներ, երբ օգտագործվում են մարդկանց նկատմամբ արհամարհական վերաբերմունք արտահայտելու համար**՝ «□ պիտի մի քիչ շանորոգություն անենք» (Խ, 267) «1. նենգություն, 2. աներեսություն», «□ շնաթափ են տվել ձեր խնձրստանցիները» (Ծ, 90), «-Աման, շանսատակ չանեք շանը» (Ծ, 652), «սաստիկ ծեծել», «□ պոչ կխաղացնեին մեր առաջ» (Ծ, 132) «1. կշողորոթեին, 2. կխորամանկեին», «Բախտիդ քացի մի տուր» (Խ, 272) «մի՛ հրաժարիր», **3. կենդանիների մարմնի մասերի անվանումներ, երբ գործածվում են մարդու համապատասխան մարմնի մասերի անվանման համար**՝ «Ռեխդ ցրիվ չտաս» (Ծ, 63) «չհայիոյեն», «□ ռեխը տեսնել» (Խ, 281) «հանդիպել», **4. անշունչ առարկաներին բնորոշ երևույթներ անվանող բառեր** [22], որոնք օգտագործվում են մարդկանց արարքների արտահայտման համար՝ «Քո ոտի տակի հողն եմ, խան» (Ծ, 16) «ենթակա, հնազանդ», «Ամբոխը խախալվեց տեղում» (Ծ, 38) «ցնցվեց»: Ինչպես փոխաբերությունը, այնպես և համեմատությունն ու չափազանցությունը դարձվածքների և դարձվածային միավորների արտահայտչամիջոցներից են. այսպես **համեմատություն**. «Դա լավիդ կրակի պես բան է» (Ծ, 69), «□ և օծի պես տապ արած սպասում է երկու կողմերի ջլատմանը» (Ծ, 579), «□ ինչ ես քաղուշի պես ձեն տալիս» (Խ, 314), «□ հողը թանձր կոկած հարիսայի պես եռ է գալիս» (Խ, 247), «...չախչախի ձենը գուռնի ձենի պես մտել է մեջը» (Խ, 251), «□ թալ բեղերը դոչի եղջուրների պես» (Խ, 113), **չափազանցություն**. «...օրը սև է առանց չախչախի» (Խ, 251), «□ լուռ ուղտ կշի»

մեն, հալալը կհարամցնեն» (Խ, 284), «□ցավից ծաք-ծաք կլինենք» (Խ, 212), «□սրտները ջուր դառած սպասում» (ԾՅ, 7), «□թող աշխարհը փուլ գա» (Խ, 160), «□ինչ եք լեղաճաք եղել» (ԾՅ, 193), «□իր հարստությունից մի մազ չպակսի» (Խ, 160), «□քահանան սրտաճաք է եղել, մեռել» (Խ, 326) և այլն:

Ընդհանուր առմամբ Ս. Այվազյանը կեղծ ու շինծու բառաձևեր և քերականական կառույցներ չի ստեղծել, այլ ազգային լեզվամտածողությանը հարիր ըստ հարկի օգտագործել է մայրենի խոսվածքը՝ մասնավորապես «Խնծորեսկ»-ում խոսքը դարձնելով բազմաբնույթ, դիպուկ ու պատկերավոր: Իսկ «Ճակատագիրն հայոց»-ում հեղինակի լեզուն ավելի չեզոք է, որով հակադրվում է հերոսների ոճավորված խոսքին:

Այսպիսով՝ ժողովրդախոսակցական տարրերի կիրառությունները, ի ցույց դնելով ստեղծագործ գրողի լեզվաոճական կարողություններն ու հմտությունները, անմիջականություն են տալիս նրա խոսքին, բացահայտում նրա պատկերավոր լեզվամտածողության յուրովի դրսևորումները: Ոճական արժեքով գործածված խնդրո առարկա իրողությունները ևս նպաստել են կերպարների խոսքի անհատականացմանը, կենդանի ու հագեցած գեղարվեստական միջավայրի կերտմանը: Կարծում ենք՝ նմանօրինակ աշխատությունը կարևոր ու հետաքրքրական է հեղինակի լեզվարվեստի ու ոճի առանձնահատկությունները քննելիս:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այվազյան Ս., ճակատագիրն հայոց, Եր., 1966, էջ 10: Հետայսու՝ նշված գրքից մեջբերման դեպքում փակագծերում կնշվի ԾՅ և էջը:
2. Այվազյան Ս., Խնծորեսկ, Եր., 1982, էջ 6. հետայսու՝ Խ:
3. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները (խոսքի տեսություն), Եր., 1990, էջ 229:
4. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Եր., 1973, հ. 2, էջ 16:
5. Մալխասյանց Ա., Հայերեն բացատրական բառարան, Եր., 1945, հ. 4, էջ 144:
6. Մարգարյան Ա., Գորիսի բարբառը, Եր., 1975, էջ 528:
7. Մալխասյանց Ա., Հայերեն բացատրական բառարան, Եր., 1944, հ. 3, էջ 184:
8. Պողոսյան Պ., նշվ. աշխ., էջ 213:
9. Աճառյան Հ., Բնությունը Ղարաբաղի բարբառին, Վաղարշ., 1899, էջ 108:
10. Մարգարյան Ա., նշվ. աշխ., 1975, էջ 218:
11. Տե՛ս Մկրտչյան Ռ., Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Եր., 1992, էջ 120-121:
12. Տե՛ս Պողոսյան Պ., նշվ. աշխ., էջ 230-231:
13. Մկրտչյան Ռ., նշվ. աշխ., էջ 119:
14. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990, էջ 301:
15. Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Եր., 2000, էջ 14:
16. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990, էջ 329:
17. Նշված իմաստները տե՛ս Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975: Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Եր., 2011:
18. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990, էջ 333:
19. Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 190:
20. Նույն տեղում, էջ 196:
21. Նույն տեղում, էջ 102:
22. Նշված կետերի մասին տե՛ս Մելքոնյան Ս., նշվ. աշխ., էջ 104-105:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Ժողովրդախոսակցական տարրերը Սուրեն Այվազյանի «Ճակատագիրն հայոց»
և «Խնձորենկ» վեպերում
Սվետլանա Մանուչարյան**

Մեր հոդվածում քննել ենք Ս. Այվազյանի «Ճակատագիրն հայոց» և «Խնձորենկ» վեպերում ժողովրդախոսակցական տարրերի տարբեր կիրառությունները: Ժողովրդախոսակցական բառապաշարի յուրաքանչյուր իրողության ճիշտ և տեղին գործածումն արտացոլում և ընդգծում է բարբառախոս հերոսի հոգեբանությունն ու մտածելակերպը: Վիպական բնագրերին ժողովրդայնություն են հաղորդում գրական բառերի բարբառային տարբերակները, դարձվածքները և դարձվածային միավորները, որոնք հեղինակը օգտագործել է հիմնականում հերոսների խոսքում: Այդ իրողությունները նպաստում են կերպարների խոսքի անհատականացմանը և կենդանի գեղարվեստական կոլորիտի կերտմանը:

РЕЗЮМЕ

**Народно-разговорные элементы в романах Сурена Айвазяна
“Судьба армянская” и “Хндзореск”
Светлана Манучарян**

Ключевые слова: народно-разговорные элементы, диалектные варианты, употребить, народность, образная речь, типизирование, стилизовать, выразительность.

В нашей статье мы анализировали различное применение народно-разговорных элементов в романах С. Айвазяна “Судьба армянская” и “Хндзореск”. Правильно и к месту применённая каждая реалия народно-разговорной лексики отражает и подчёркивает психику и мышление героя, говорящего на диалекте. Эпическим оригиналам придают народность диалектные варианты литературных норм, идиомы и фразеологические единицы, которые автор применил в основном в речи героев. Эти реалии способствуют индивидуализации речи персонажам и созданию живого художественного колорита.

SUMMARY

**The colloquial dialectic elements in Suren Ayyvazyan’s “The fate of Armenia”
and “Khndzoresk” novels
Svetlana Manucharyan**

Keywords: colloquial dialectic elements, dilectical variants, use, popularity, figurative speech, tipification, stylize, emphasis.

In our article we have investigated the various usages of colloquial dialectic elements in S. Ayyvazyan’s “The fate of Armenia” and “Khndzoresk” novels. The precise and relevant usage of colloquial lexicon’s each particle expresses and stresses the psychology and mentality of a dialect speaking character. The dialectic versions of formal words, the idioms and phrasal verbs, which have been used by the author in the characters’ speech, transfer folkloricity to epicplots. Those facts foster the personalization of characters’ speech and the creature of natural fictional atmosphere.